ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/170

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.11.2018թ. թիվ 27/26-3/20771-18 գրությամբ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 09.11.2018թ. թիվ 5/06.2/52310-18 գրության հիման վրա, 15.11.2018թ. «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ բնապահպանության նախարարությունը 09.11.2018թ. թիվ 5/06.2/52310-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման արդյունքում «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:»:

ՀՀ բնապահպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն 20.11.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 24.10.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Նշված ընթացակարգով «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ առաջին չափաբաժնով, որի գինը կազմել է 518.000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավո-րությունների վերաբերյալ, որին ի պատասխան տրվել է եզրակացություն, համաձայն որի «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ 63.251 ՀՀ դրամ:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.11.2018թ. թիվ 4 արձանագրության 3.1 կետով մերժել է «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն 24.10.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 63.251 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի մոտ առկա 63.000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների

հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարման գծով:

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ Ընկերության միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշային վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը, որտեղ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն չի նշվում:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին):

Հայտնում ենք, որ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն որևիցե եղանակով երբևիցե չի ծանուցվել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարի գծով առկա պարտավորության առկայության մասին: Փաստացիորեն առկա է եղել արձանագրված պարտավորության մասով «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի իրազեկված չլինելու հանգամանքը, քանզի Ընկերությունը հայտը

ներկայացնելու դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ կարող էր ստանալ միայն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքից, իսկ ինչպես արդեն նշվել է, նշված քարտի տվյալների համաձայն՝ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:

Ինչ վերաբերում է առկա 251 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորության, ապա այն հանդիսանում է տույժ՝ եկամտային հարկի և շրջանառության հարկի գծով: Միևնույն ժամանակ խնդրում ենք հաշվի առնել, որ 251 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը չի գերազանցել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գնային առաջարկի մինչև 1 տոկոսը, քանի որ այն կազմել է 518.000 ՀՀ դրամ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ընդամենը 251 ՀՀ դրամի հարկային պարտավորություն, ինչը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գնային առաջարկի մինչև 1 տոկոսը:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/170 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 15.11.2018թ. թիվ 27/26-3/20771-18 գրությունը, ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.11.2018թ. թիվ 5/06.2/52310-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46 ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.10.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2, 30.10.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 01.11.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 20.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, 24.10.2018թ. դրությամբ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.11.2018թ. «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ին ուղղված թիվ 2546 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.10.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար՝ տրանսպորտային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը կազմել է 518.200 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 25.10.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 10.1 կետով որոշել է Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ին:

- 11.1.1 կետով որոշել է հարցում ուղարկել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի Հրավերով սահմանված պահանջի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.10.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 63.251 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը՝

- 30.10.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով արձանագրել է, որ համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, ինչը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով նախատեսված սահմանաչափը:

- 01.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 3.1 կետով որոշել է «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

«Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն 20.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ արձանագրված 63.251 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորությունից 63.000 ՀՀ դրամն՝ ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 20.11.2018թ. թիվ 2546 գրության, գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով, իսկ 251 ՀՀ դրամը հանդիսանում է տույժ՝ եկամտային հարկի և շրջանառության հարկի գծով, որը չի գերազանցում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը: Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրվա դրությամբ (24.10.2018թ.) ունեցել է 251 ՀՀ դրամ հարկային պարտավորություն և քանի որ այն չի գերազանցել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը, Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրել է 24.10.2018թ. դրությամբ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ին 20.11.2018թ. տրված թիվ 2546 գրությունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ին 20.11.2018թ. թիվ 2546 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի պարտավորությունը 24.10.2018թ. դրությամբ կազմում է 63.251 ՀՀ դրամ, որից ապառք 60.000 ՀՀ դրամը դրոշմանիշային վճարների գծով, տույժը՝ 224 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով, 26 ՀՀ դրամ շրջանառության հարկի գծով: Դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունը առաջացել է 2017թ. հունվար-դեկտեմբեր և 2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համար ներկայացված եկամտային հարկի սոցիալական վճարի ամսական հաշվարկներից:»:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին

հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար՝ տրանսպորտային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/46 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի Հավելված №8-ով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.
- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի Հավելված №9-ով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով

սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.10.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (24.10.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 63.251 ՀՀ դրամ:

- «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 63.000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունից 60.000 ՀՀ դրամն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով, իսկ 251 ՀՀ դրամն՝ եկամտային հարկի և շրջանառության հարկի գծով, որը չի գերազանցում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրվա (24.10.2018թ.) դրությամբ ունեցել է 251 ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որը չի գերազանցել ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության

դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.11.2018թ. թիվ 27/26-3/20771-18 գրությամբ «Ջի-Էներջի Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ